

Մամլոյ Հաղորդագրութիւն ներկայիս իրավիճակներուն վերաբերեալ

Այս օրերուն, Սուրիոյ կարգ մը շրջանները կ'ենթարկուին յաւելեալ կործանումի և սպաննութեան, վարչակարգի ուժերուն և զինեալ ընդդիմութեան միջև փոխանակուած անխտիր ուժակոծումին հետեւանքով պայթուցիկ տակառներով, կազի թիթեղներով և այլ կործանումի ու հաղաքական սպաննութեան միջոցներով: Հալէպի մէջ, որմէ կտրուեցաւ կեանքի երակը, Խանասերի մէջ, Ճոպարի, Քաֆար Չէթայի և բազմաթիւ այլ շրջաններ Սուրիոյ մէջ, երբ վարչակարգը կը ուժակոծէ պայթուցիկ տակառներով զինեալ ընդդիմութեան վերահսկողութեան տակ եղող թաղամասերը, իր հերթին զինեալ ընդդիմութիւնը կը պատասխանէ կազի թիթեղներով, այս անհեթեթ խաղին օրական գոհ կ'երթան հարիւրաւորներ, ինչպէս նաև շինութուններու, ապրուստի և ապրելու աղբիւրներու ոչնչացում, և պատճառ դառնալ բռնի տեղահանում քաղաքացիներուն իրենց տուներէն, այս բոլորին նաև, վերջին երկու օրերուն ընթացքին, կը բուրայ քիմիական զէնքի գործածելու հոտը վերստին Դամասկոսի և Համայի արուարձաններու կարգ մը շրջաններու մէջ: Մենք, Ազգային Համակարգող Մարմինն մէջ, կը դատապարտենք բռնութեան շարունակութիւնը, և կը պահանջենք անոր մէջ մասնակից բոլոր կողմերը դադրեցնել այդ անմիջապէս: Կը յիշեցնենք կրկին մեր սկզբունքային դիրքորոշումը թէ բռնութիւնը պիտի չի առաջնորդէ որեւէ արդիւնքի, միայն քանդել երկիրը և ճեղքել ժողովուրդին միասնականութիւնը, և կը բեռցնենք երկրին այս իրավիճակին հասնելու քաղաքական հիմնական պատասխանատուութիւնը վարչակարգին իր բռնի մօտեցումին պատճառով, որուն հետեւեցաւ սկիզբէն ի դէմ ժողովուրդին արդար պահանջներուն ... Այս է արդիւնքները բռնութեան և զինուորական մօտեցումին՝ կործանել, սպաննել և տեղահանել ... Արդեօ՞ք չ'եղաւ ժամանակը, ուր պէտք է գիտակցին բոլորը թէ ելք չիկայ ներկայիս ճգնաժամէն և պահպանել ինչ որ մնաց երկիրէն ու ժողովուրդէն միայն բանակցային քաղաքական լուծումը Ժընեւի խորհրդածողովին ընդմէջէն ...

13/04/2014-ին, Ազգային Համակարգող Մարմինն տեղեկատուական գրասենեակը